ազգին Հայոց ՝ի վաղ ժամանակաց անտի, և բանք թըղթոցն ճշմարիտ են։ Ապա հրաման արար գաւառապետն Պատրիարքին Հայոց, հանդերձ միաբանութեամբ իւրով տիրել եւ ժառանգել զեկեղեցիս ազգին իւրոյ առանց հակառակելոյ ուրուք։ ՝ի ՌՃԷվվալ ամսոյ, ՌՌՀ (1691)։

Յաղագս Ս. Փրկչի վանաց, արտաքոյ պարսպի քաղաքին, բազում անգամ բանք եղեն յընթացս պատմութեան, է ուրեք վնասոդութենէ նորա ճառեցաք՝ և է զի՝ զայլ և այլ դիպուածս նորին նկարագրեցաք։ Զի թէպէտեւ սքանչ նորոգեցաւ վանքն այն ՝ի ժամանակս ժամանակս, այլ արտաքինն պարիսպ նորա մնաց խոնարհ, զի բանութիւնք ժամանակին չտային թոյլ բարձրացուցանել զայն, նմին իրի և չզերծաւ իսկ ՝ի վտանգէ, զի ատէպ ատէպ գողք և աւազակք բերեալ սանդուխս եւ զայլ գործիս ՝ի գիշերի կանգնէին յորմն, և ելեալ ՝ի վեր ջնանէին ՝ի վանս, եւ գործէին զմեծամեծ չարիս, որպէս արարին և յայսմ նըւագի՝ կողոպտելով զեկեղեցին՝ մերկացուցին զվանս ՝ի բովանդակ կահուց, և սպանին զերկուս ՝ի միաբանից՝ ըզՅովհաննէս և զկարապետ, և այլքն փախուցեալ զերծան ՝ի ձեռաց նոցին։ Տեսեալ Յովհաննու Պատրիարքի զխռովարուժ բարս Արարացւոյ աւազակաց, ազգ արար ՝ի Կոստանդինուպոլիս, և էառ հրովարտակ յԱրքայէ, և հրաման ՝ի գաւառապետէն և ՝ի մեծամեծաց երուսաղէմի, և ձեռնարկեալ վերստին նորոգեաց զվանս Ս. Փրկչի, և բարձրացոյց զարտաքին պարիսպն կանգունս ՟ի վերայ հին պարսպին. նորոգեաց զեկեղեցին և զ25 սենեակս անդ, և երաց ըզդաղտնի պատուհանս ՝ի չորից կողմանց ՝ի տանիսն, դիտել անտի զերթեւեկս ՝ի պահանջել հարկին և հսկել պահապանաց. նորոգեաց զաստիճանս և զայլ ամենայն կարեւոր տեղիս. արար ճանապարհ ՝ի կողմն հիւսիսոյ, ուր է դուռն վանացն՝ եւ յարդարեաց զայն քարամբք, որ ձգի յարեւելից որմոյն մինչեւ յարեւմուտս, և այս ճանապարհ միայն սեպհական է Հայոց և ՝ի դիւրութիւն միաբանից։ Եւ եղեւ իբրեւ կատարեաց զամենայն նորոգութիւնս, առաքեաց զխոխանորդ իւր առ գաւառապետն, եւ խնդրեաց առնել քննութիւն, որպէս օրէն էր յայնժամ։ Եւ նա առաքեաց զոմանս ՝ի դատարանէ բազմութեամբ այլազգեաց,